ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշսֆի 1

№ 4576-Ա «11» նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.4046-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման N3 հավելվածի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգով, հիմք ընդունելով «Երևանի Ն.Աղբալյանի անվան հ.19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի գրությունը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2025 թվականի նոյեմբերի 10-ի հ. Ն/66822-25 զեկուցագիրը.

1. Դադարեցնել «Երևանի Ն.Աղբալյանի անվան հ.19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ Նիկոլայ Սարիբեկյանի լիազորությունները:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի «Երևանի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կազմերը հաստատելու, Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի հ.632-Ա, 2021 թվականի հուլիսի 22-ի հ.հ. 2596-Ա, 2597-Ա, 2598-Ա, 2599-Ա, 2600-Ա, 2601-Ա, 2602-Ա, 2603-Ա, 2604-Ա, հ.2605-Ա, 2606-Ա, 2607-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.4046-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 6-րդ հավելվածի 5-րդ կետի 5-րդ սյունակում՝ «Սարիբեկյան Նիկոլայ» բառերը փոխարինել «Աբելյան Նարինե» բառերով.

2) որոշման 6-րդ հավելվածի 5-րդ կետի 6-րդ սյունակում՝ «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246